




**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ ԾՆՆԻԿ ՄԵՆԱԳՐԱՅԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ-ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՕՆՆԻԿ ՄԵՆԱՊԵՐԱՆ,
ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէր-
պօրեանից գոհունակութեամբ րեղեկացանք Միացեալ Նահանգների հասարակական
կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւնների եւ եկեղեցանուէր Ձեր երկարամեայ գործու-
նէութեան մասին:

Յարգարժան այրն Մեհրապեան, մեծապէս գովելի է, որ Դուք Ձեր ազնիւ Տիկնոջ ու զա-
ւակների հետ միասին բազմաթիւն ծառայութիւններ էք մատուցում ԱՄՆ հայոց Արեւ-
մրտեան Տիրախնամ թեմի կեանքում՝ մեծապէս նպաստելով հայ համայնքի համախըմբ-
մանն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը:

Հայրապետիս համար գոհունակութեան առիթ է յարկապէս, որ Սուրբ Ծննդեան փօնա-
կան այս օրերին, շնորհիւ Ձեր իշխանական ազնիւ նուիրաբոլորեան, նոր եկեղեցի օծուեց
Միացեալ Նահանգներում, հայաշատ Կոլումբիայի թաղաքում՝ դառնալով շրջակայքի հայու-
թեան հոգեւոր եւ ազգային կեանքի կենտրոն: Այսօր արդեն սրբավայրի լուսաւոր կամար-
ների ներքոյ հաւաքաւոր հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում՝ ե-
րախարագիւրութեամբ Տիրոջ օրհնութիւնը հայցելով նաեւ Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամնե-
րին:

Ձեր գործերը վկայություն են առ Աստուած Ձեր հաւատքի եւ առ Մայր Եկեղեցին ու հաւաքաւոր ժողովուրդը Ձեր որդիական նուիրումի: Դուք, արդարեւ, արժանի գաւալն էք իրանահայ աւանդաշատ գաղութի, որի բազմադարեայ պայքարները վառ օրինակ է մեր ժողովրդի գոհողութեան ոգու, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտապէս դրսևորած աներկբայ սիրոյ:

Բարձր գնահատելով Ձեր եւ Մէիրապեան ընտանիքի ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւաքաւոր ժողովրդին, սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրութեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պապոտոյ բարձրագոյն շքանշանը:

Առ Աստուած Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ զօրակցութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ՝ շարունակելու Ձեր արդիւնատու ծառայութիւնները մեր Մայր Եկեղեցուն ու բարեպաշտ ժողովրդին:

Թող Տէրը քաջառողջ երկար կեանք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պահպանելով Իր խնամքի եւ օրհնութեան մէջ:

Ողջ լիերութի ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենջաւն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 8-ն Յունուարի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 216

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. հունվարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատկոնդակով

Օրինության գիր է տրվել.

Հերման Խնդիրյան (Կանադահայոց թեմ)

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Պոլսահայ մշակութային միությանը

Ավագության պատիվ է տրվել.

Գարեգին քահանա Հովսեփյան (Իրաքի հայոց թեմ)

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՐ

ԿԱՐԳԱՆՈՒՅԾ Է ԱՐՎԵԼ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐ Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հունվարի 9-ի Հայրապետական քննորհնությամբ կարգալույծ է հռչակվել Իրաքի հայոց թեմի հոգևոր սպասավոր Տ. Արարատ քին. Հովսեփյանը՝ հոգևորականին անվայել վարքի և կեցվածքի համար: Այս որոշման համար հիմք են ծառայել Նորին Սրբությանն ուղղված Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի և Իրաքի Ազգային Կենտրոնական Վարչության դիմումները:

Կարգալույծ արված հոգևորականը դատվում է աշխարհականների շարքը և այսուհետ կկոչվի ավագանի անունով՝ Նորայր Հովսեփյան:

